

ԹԵՂԱԲՐԻՏԱՄԱԿԱՆ-ԹՐԱԿԱՆ-ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԹԱՂԹԱԹԵՐԹ

Աղբիւրի տարեկան բաժանորդագինն է 3—28 կ. իսկ Տարազինը 6 ռուբլի. առանձին Ա-ը 25 կ. Հասցէն. Тифлисъ редакція иллюстр. журн. Агбюръ *կամ* Таразъ. *իսկ արտասահմանից* Tiflis-Caucase, Rédaction des jour. illustrés Agbur *կամ* Taraz.

№ 16 կիրակի 5 մայիսի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ 1891

ԹԻՕՆԷԹԻ ՇՐՋԱԿԱՑՔԸ

Խուշնարած Թուրքերեր

ՎԵՐՋԻՆ ՎԷՐՔԵՐ

ԺԴ.

ԱՌԵՐԱԿ ՕՋԱԽ

Գանձասարը մերկանում, դատարկւում էր։ Մի քանի հատ ժիր ձեռքեր խլում էին, պոկում նրանից դարերի ընթացքում հաւաքած զարդն ու հարստութիւնը։ Պոկում էին չտապով, եռանդով, միմեանց սիրտ տալով. կարծես թէ դրանք, այդ հայերը, այն ժողովրդից չէին, որ մի քանի դար չարունակ սիրել էր, պահել այդ վանքը, զարդարել էր իր դառն քրտինքի աշխատանքով. կարծես Աղւանից հնադարեան կաթողիկոսութիւնը, որ իր վերջին ապաստանն էր գտել այս վանքում, այլ ևս հարկաւոր չէր այդ ժողովրդին, իր ծառայութիւնը կատարել, վերջացրել էր և այժմ, ինչպէս մի ուժասպառ ծերունի, պատրաստւած էր յաւիտենական կորստի։ Այժմ մի ինչ որ օրհասական տագնապ ստիպում էր, թև ու թիկունք էր տալիս գողանալու, անթիւ հարստութիւնները հեռու տանելու։ Զրկար մէկը, որ ընդդիմանար այդ աւերմանը։

Խաչէնի բարեպաշտ իշխանների հայր Զալալն էր այդ վանքը այնպիսի խնամքով չինել, դեղեցիկ ճաշակով զարդարել։ Նա, մի ամբողջ դաւառի հայրը, իր ժամանակի բռնութեան ողբալի զոհը, այդ իսկ կամարների տակ էր թաղւած, ուր կատարւում էր խաղաղ, կամաւոր աւերմունքը։ Վանքի հիւսիսային կողմը թանձր ծմակով պատած մի ահագին ձոր է. և այդ ձորի ծմակը իր ծոցում հարիւրաւոր դաղտնարաններ էր պատրաստել վանքի հարստութիւնները յափշտակողներից ծածկելու համար։ Նրան էին յանձնւում այդ հարստութիւնները... Մարդիկ չալակներով իջնում էին ծմակը և յետ էին դառնում դատարկ...

Աղւանից կաթողիկոսութեան վերջն էր։ Մելիքների ցանկութիւնը կատարւում էր. խուսափութիւններից ալեկոծւող երկրի մէջ անհնարին էր պահել այդ հազարամեայ սրբազան օջախը և նրան հեռու էին տանում։ Խաչէնի խրոխտ լեռների վրայ բազմած վանքը այլ ևս չըպիտի տեսնէր մի հաստատ կրօնական իշխանութիւն։ Երբէ՛ք...

Դալի-Մահրասայի խումբը չրջապատած էր վանքը, մեծ զգուշութեամբ հսկում էր, որ ոչ ոք չիմանայ թէ ինչ են անում վանքի սպասաւորները։ Իսկ դրանք ծանր բաները, պղնձի ամանները, կապերտներն ու գորգերը, եկեղեցական զգեստները, թաղում էին ծմակի մէջ, իսկ փոքրիկ, բայց մեծագին իրերը հաւաքում էին մի տեղ, բեռներ էին կազմում։ Երկու օր այդպէս աշխատում էին. երկրորդ օրւայ իրիկնադէմին տեսան, որ դուրս տանելու բան չըմնաց։ Սկսեցին ճանապարհ ընկնելու պատրաստութիւնը տեսնել։ Վանքում մնում էր միայն մի ալեոր տիրացու, որ կաղում էր երկու ոտից և անդադար դէս ու դէն գնում օրօրւելով, սաստիկ յուսահատւած. նա չէր կարողանում հասկանալ թէ ինչպէս կարելի է վանքն այդպէս պլոկել, նա զարմանում էր այն մարդկանց վրայ, որ չտապով տանում էին սրբութիւնները, թանգագին անօթները, գրքերը և սաղմոսի զօրաւոր կըտորներն էլ քթի տակ կրկնում։ Դանձասարի այդ հլու, բազմամեայ ծառան մի քանի անդամ պատրաստւեց յանդիմանութիւն անել չորս միաբան վարդապետներին, որոնք թամբում էին ձիաները և այնքան անտարբեր էին երևում, որ մինչև անդամ իր՝ տիրացուի հոգին էին հանում այս ու այն անկիւնը հարիւր անդամ վնտրել տալով մի ինչ որ կորած բաճկոն գտնելու համար։ Բայց խեղճը միշտ հարկադրւած էր լեզուն պահել, որովհետև եպիսկոպոսը անդադար անց ու դարձ էր անում։ Սրբազանը չարունակ տիրացուին խրատներ էր տալիս և երբ սա մի կերպ ազատւում էր այդքան հրամաններից ու կարգադրութիւններից, աւելի եռանդով էր արտասանում սաղմոսի տները։ Բայց ոչ ոք նրա մասին չէր մտածում։ Թէև եպիսկոպոսի ձին վաղուց պատրաստ էր, բայց դեռ գնալու հրաման չկար. ինքը, եպիսկոպոսը, դեռ ման էր գալիս, բաց էր անում խուցերի դռները, մտնում էր վանքը, նայում էր ամեն մի կողմին, ինչպէս երևում էր ամեն մի տեղին ձեռք էր հասցնում, որ մի բան չըմոռացւի, չըմնայ։ Դա Սարգիս եպիսկոպոս Հասան-Զալալեանն էր, Գանձասարի առաջնորդը և Աղւանից կաթողիկոսական տեղապահը։

Դալի-Մահրասան, Թիւլի-Արզումանը և Զալաղան-Խղրաչին վանքը դատարկողների, վերջին կարգադրութիւնն անողների թւում չըկային։ Նրանց գործն ուրիշ էր։ Վանքի հարաւային պարսպի տակ, գերեզմանատան վրայ կային մեծ ու երկայն գոմեր, ուր պահւում էին վանքի անասունները։ Այժմ այդ գոմերը ուրիշ նշանակութիւն էին ստացել և դրանց առաջ այդ երեք մարդիկ պահապան էին կանգնած ու չէին թողում, որ մի հատ մարդ էլ դուրս գայ։ Մութ ու երկար, կեղտոտ սենեակներում, անասունների աղբի վրայ թափւած էր ամեն հասակի մարդկանց մի բազմութիւն։ Էլ մեծի ու փոքրի չէին նայել, գիւղը բոլորովին ամայի էին դարձրել, բոլորին հաւաքել, այստեղ էին ածել։ Այդ գիւղի վանքի մեծ դռների դիմաց փոքրիկ թումբը չորս կողմից բռնած էր. այդտեղ միայն չներն էին մնացել, որոնք վանքից չալակած ապրանք դուրս տանողների վրայ երկու օր հաչելուց նեղացել էին, վերջը սովորել էին յամառ լռութեամբ և անտարբեր աչքերով դիտել անցնողներին։

Օրը վերջանում էր, արեգակը արդէն սարի գլխին էր, որի հսկայական չւաքը հասել էր վանքին և հեռուհեռ բարձրանում էր դէպի նրա գմբէթը։ Սարգիս եպիսկոպոսը, վերջացնելով իր բոլոր գործերը, դուրս եկաւ վանքից և հանդարտ քայլերով մօտեցաւ Դալի-Մահրասային։

—Հը՛, ինչպէս են հիւրերդ, հարցրեց նա։

—Ձեր բարի օրհնութեամբ լաւ են, սրբազան։ Բայց չատ անհանգիստ անպիտաններ են. հէնց ուզում են գըլուխ դուրս հանել, հոտոտել, աչքի մի ծայրով տեսնել, թէ ո՞վ կայ, ի՞նչ կայ։ Ցիմարները չեն հասկանում, որ ես Թիւլի-Արզումանին զօռով եմ պահում, թէ չէ նա նրանց մի մի կըկոտորէր։

—Էհ, սրբազան հայր, մեզ զուր չարչարում էք, մէջ ընկաւ Արզումանը,—ես չեմ հասկանում թէ ինչու այսքան հաւերին պիտի այս բոյնը հաւաքենք ու յետոյ կանգնենք, պահպանենք հաւաբոյնը... Ինձանից հարցնես ես կասեմ, ափսոս է այդ խնամքը, նրանք չեն կարող գնահատել. ափսոս է, կոտորի՛ր, դէն ածի՛ր գնան... անպէտք բաներ են, դրանց ի՞նչպէս մարդ ասես...

Սարգիս սրբազանը ծիծաղեց տխուր կերպով։

—Հանաք մի՛ կարծէք, սրբազան, ես սուտ չեմ ասում։ Այսքան բանը տեսնելուց յետոյ, կըլինի՞ մի մարդ, որ այսպիսիներին խղճայ։ Չի՛ լինիլ, այս սուրբ վանքն է

վկայ։ Սրանց համար ինչ ասեմ... Եթէ դու չլինէիր, ես կիմանայի, մի հատ էլ չէի թողնիլ. բայց քո կարդադրութիւնն է, մնացել եմ սառած։ Բայց... սրանց համար աղօթք անելն էլ մեղք է...

Եւ Արզումանը սրտի խորքից մի ծանր հառաչանք հանեց, մի նշան, որով նա ցոյց էր տալիս, որ ինքն այդ բոլորն ասում է լրջօրէն, առանց հեղնութեան։ Զալալան-Իւզբաշին, կարծես, ամենից լաւ հասկանալով այդ մարդու միտքը, մօտեցաւ նրան. երկայն մահակի ծայրին դրաւ իր ծնօտը և մի քաղցր հայեացքով, ժպիտը բերանին լսում էր նրան։

—Էհ, որդիք, խօսեց եպիսկոպոսը աջ ձեռքը բարձրացնելով և իր տխուր ու անշարժ աչքերը մէկի կամ միւսի վրայ դարձնելով։—Ասում ենք, ճշմարիտ է, բարկութեան և սրտնեղութեան ժամանակ այդպիսի խօսքեր ասում ենք և կարծում ենք թէ գտել ենք դժբաղութիւնը, պրծել։ Բայց արդեօք այդպէս է... Երանի՛ թէ Ղարաբաղի բոլոր լեռներն ու ձորերը այսպիսի մարդկանցով լցւած լինէին։ Ոչքան վատ լինեն, ոչքան իրանց թոյլ, յիմար գործերով մեզ զայրացնեն, բայց մերոնք են, մեր մարմնից ու արիւնից, և մենք չատ երջանիկ կլինէինք, եթէ դրանք հանգիստ ապրէին, իրանց վախկոտ, անպիտան սրտերը անվրդով պահէին։ Նրանք մեղաւոր չեն. եթէ աշխարհի վրայ ապրող ամեն մի մարդ առիւծ դառնայ, ո՞վ կըկարողանայ ապրել, միմեանց կուտեն, կըփչացնեն։ Մեր տունը քանդողները դրանք չեն, դրանք իսկի տուն քանդելու քաջութիւնն էլ չունեին։ Քանդում են նրանք, որոնք այդ թշառականների մէջ մտած, հանգիստ ու դադար չեն տալիս, նրանց խեղճ հոգիներն են խաբում, սատանային ծախում։ Նրանց խոստանում են հարստութիւն—ո՞վ է այնքան յիմար, որ ադքատ ապրել կամենայ։ Նրանց խոստանում են ապահովութիւն և այդ խոստման նշանակութիւնը ցոյց տալու համար գազանաբար կեղեքում են նրանց—խաղաղ կեանքից էլ ի՞նչ լաւ բան։ Նրանք միտքը խառնում են, փառք, պատիւ են խոստանում, իւրացնում են, յետոյ գերութեան չղթաները ամրացնում նրանց ձեռքերի վրայ։ Այդպէս անողները մի ամբողջ ժողովրդի չափ չեն, նրանք հատ հատ են համրվում. ահա նրանց կոտորեցէք, նրանց վնասակար թոյնը հեռացրէք մարդկանցից։ Այն ժամանակ դուք կըգտնէք ուղիղ ճանապարհը, այն ժամանակ կըտեսնէք, որ այս իսկ ժողովուրդը, սա, որ այսպէս զայրացնում է ձեզ, ձեր ետևիցն է գալիս, ձեզ է ճանաչում։

Այս խօսքերը, որ արտասանւում էին հանդարտ և ծանր կերպով, խիստ ազդեցին լսողների վրայ։ Ոչ վարդապետը, ոչ Թիւլին և ոչ յափշտակող հարիւրապետը բերան չըբացին, պատասխան չտուին։ Նրանք գլուխները կախ արած ակնածութեամբ լսում էին եպիսկոպոսին ինչպէս դատապարտեալներ, որոնց երեսին կարդացւում է խիստ ճարտար կերպով յօրինած դատավճիռը։ Իսկ եպիսկոպոսը յանկարծ գլուխը բարձրացրեց և իր հայեացքն ուղղելով դէպի վանքի փոքրիկ գմբէթը, ձեռքը կրծքին զսրկեց և չարունակեց.

—Ո՞վ պիտի պատասխան տայ քո աւերման համար, եկեղեցի հայոց։ Ալեկոծեալ ծովը ծփում է և մենք թոյլ ու անհաստատ նաւակներին ապաստանած մարդիկ ենք. ո՞վ այնքան արդար կըլինի, որ կրկին տեսնէ քեզ, կրկին բաց կանէ քո փառքի դռները և ծունր դնելով սուրբ սեղանիդ առաջ, կասէ. «ահա Տէր, տուն քո և բնակութիւն քո»։

Նա լռեց, բայց նրա աչքերը դեռ յառած էին գմբէթի վրայ։ Նա, կարծես, ադահութեամբ դիտում էր այդ գմբէթը, հաւատացած լինելով, որ վերջին անգամն է տեսնում։ Եւ ինչ բերկրանք, ինչ անձկութիւն էր յուզում Զալալան տոհմի այդ ներկայացուցչին, որ կենդանի աչքերով հեռանում էր այդպիսի հանդամանքների մէջ իր պապենական պարծանքից—Գանձասարի վանքից։ Ահա երևում է սև, երկաթէ խաչը, որ պսակում է գմբէթի ծայրը։ Այդ տեղին է նայում Զալալեանը. այդտեղ սև երկաթի չուրջը հաւաքւել են արեգակի վերջին շողերը և դողալով, արագ մարելով, կարծես համբուրւում են նրա հետ, դողարիկ լեղում մնաս բարև են ասում։ Վանքի բարձրահասակ մարմինը արդէն ընկղմւած է ստուերի մէջ, որ չուտով թանձր մթութիւն դառնալով, պիտի կլանէր նրան։ Իսկ բարձրում ձգւած էր անբիծ և հրաշալի կապուտակութիւնը, որ իր հանդարտ ու խաղաղ դէմքով սիրտ էր բարձրացնում դէպի իրան։ Եպիսկոպոսի հետ այդպէս լուռ, ակնապիշ նայում էին գմբէթին նաև վարդապետն ու իր ընկերները։

Արևի վերջին շողերը քիչ էլ պայծաչեցան սև երկաթի հետ և յանկարծ վերցւեցան, կորան, անյայտացան։ Կարծես այդ վախճանին էր սպասում Զալալեանը. նա կրկին գլուխը ցածրացրեց և ասաց պահապան վարդապետին.

—Մենք պատրաստ ենք. մենք հիմա կըճանապարհւենք, իսկ դուք պիտի դեռ սպասէք մինչև որ լաւ կըմթնի և այդ մարդիկ կըքնեն։ Զգուշութիւնը ամեն ժամ հարկաւոր է, երբ թշնամիներով ես շրջապատւած։ Մենք չատ հեռու դնալ չենք կարող և դուք, երևի մեզ կըհասնէք Կրատափում։

Վարդապետը գլխի շարժումներով հասկացրեց, որ լաւ հասկանում է այդ բոլորը։ Անելու բան այլ ևս չըկար։ Զալալեանը վերջին անգամ նայեց վանքին, թառաչ քաշեց։ Սրտի սիրած առարկայից բաժանւելու բոպէն վճռական էր, յուզիչ. մի անհրաժեշտ կարճ միջոցում սրտի խորքերի մէջ հաւաքւեցան անթիւ մտքեր, որ բաժանւողը պիտի յայտնէր այդ սիրելուն, որ նրա հետ չէր գնում, որ այդտեղ պիտի մնար։ Այդ մտքերը տակն ու վրայ էին դառնում, խառնվում էին, արտայայտող լեղու էին պահանջում։ Բայց երբ նա ոտը դրաւ ասպանդակում, բարձրացաւ ձիու վրայ, ստացաւ ծառայից ձիու սանձը, այդ մտքերը որպէս թէ կորան. ձիու թեթև չարժողութիւնը յիշեցրեց նրան որ պէտք է գնալ, չատ չուտ բաժանւիլ։ Եւ այդ բոլոր խառնւած մտքերի միայն մի աննշան մասը նա կարողացաւ յայտնել ջերմեռանդութեամբ երեսին խաչ հանելով և ցաւագին ձայնով կըրկնելով հին Իսրայէլի մարգարէորդու խօսքերը.

—Պատմեցէք զՍիօնէ, որ սիրէք զՏէր։

Նա գնաց։ Վարդապետը, Արզումանը, Իւզբաշին լուռ էին, անշարժ։ Նրանք էլ կարծես թէ ղգացին բաժանւողի սրտի մորմոքը, դառնութիւնը։ Եւ միայն քիչ անցնելուց յետոյ Արզումանը խօսեց.

—Այս անիծւածները ի՞նչ պէտք է քնեն։

—Դեռ օր կայ, պատասխանեց Իւզբաշին երկնքին նայելով։

Երբ, վերջապէս, վրայ հասաւ աշնանային մութ երեկոն և ընդարձակ գոմի մէջ բանտարկւածները սկսեցին

Թաւրիզի շրջակայքը

Սուրբ Էջմիածնի տաճարի առաջ դուռը

քնի պատրաստուել, այդ երեք պահապանները անձայն անյայտացան խաւարի մէջ։ Նրանք իջան ահագին ձորը, բռնեցին դէպի Կճողուտ գիւղը տանող ճանապարհը, որ ծմակների, ձորերի միջով էր անցնում և հապիւ նկատելի էր թանձր խաւարի մէջ։ Շատ տեղեր նրանք միմեանց զգուշացնում էին ճանապարհի անտանելի դժուարութիւնները յայտնելով, շատ անգամ լսւում էր ձիու սայթաքելու և մտրակի հարուածի ձայնը հեծեալի հայհոյանքի հետ։ Բայց և այնպէս նրանք ուրախ ուրախ խօսում էին։ Վարդապետը բացւել էր, հանաքներ էր անում; Արզումանը իր սրտի դարդն էր պատմում, Մանիչակի մասին էր խօսում։ Մինչև անգամ Իւզբաշին, այդ սակաւախօս մարդը, աշխատում էր նկարագրել իր կեանքից մի ինչ որ դէպք, այսինքն մի գիշերային սարսափելի ճանապարհորդութիւն Մռաւի թանձր անտառներում, ուր չար սատանան նրա ուշքն ու միտքը գրաւել էր և մի ինչ որ անորոշ ուրւականի նմանութեամբ նրան ձգում էր իր ետեւից դէպի սարսափելի անտառապատ կիրճը։ Երեւում էր որ երեքն էլ միանման գոհ էին իրանց կատարած գործի այդքան յաջող վախճանի համար։

Լ. Ը. Օ

(Կըշարունակի)

ԴԵՌ

արեւելեան վիպասանութիւն

ԼԵՐՄՈՆՏՈՎԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա.

Տիրագին Դեւը, արտաքսած հոգին,
Թռչում էր օդում մեղապարտ երկրի,
Եւ նորա մտքից անցանում էին
Ցիշատակները այն քաղցր օրերի,
Երբ Քերովբէի պէս, էր նա լուսաւոր
Աշխարհի անմեղ ընակարանում;
Երբ որ գիտութեան փափագով լցուած
Նայում էր մռայլ տարածութեան մէջ,
Ինչպէս բազմաթիւ աստղերի ցրուած
Կարաւանները շրջում են անվերջ.
Երբ նա երջանիկ եւ երանելի
Նախածին էակը ստեղծագործութեան
Ունէր սուրբ հաւատ եւ սէր գորովի,
Զգիտէր կասկած, ոչ ոխ չարութեան.
Ունայն դարերի շարունակութիւնը
Չէր նորա միտքը սարսափեցնում:...
Եւ այլ շատ ու շատ այսպիսի բաներ...
Ամեն բան յիշել չէր կարողանում:

Բ.

Վաղուց մերժված, այնտեղ շրջում էր
Նա անապատում անծայր աշխարհի,
Մէկմէկու յետնից ահագին դարեր
Անցանում էին նման րոպէի:
Մի հնչին երկրի տիրապետելով,
Ակամայ կամքը չարիք էր թափում;
Բայց ոչինչ ընդդէմ իւր չտեսնելով,
Նա չար գործերից զզուեցաւ իսկոյն:

Գ.

Եւ Կովկաս լերան գագաթի շրջով
Աքսաքսած հոգին ահա թռչում էր,
Կապտակը նորա տակ մշտապատ ծիւնով
Աղամանդի պէս փայլատակում էր.
Եւ ահա Դարեալ գետը գալարուն,
Մի օձաքնակ ճեղքուածի նման,
Լեռների ներքեւ խորին անդնդում
Ներկում է սեւ սեւ մի շերտիկ երկայն.
Իսկ Թերեքն ասես, մի առիւծի պէս,
Թաւամազ բաշը թիկնով ծաւալած,
Վեր վայր ոստնելով մեծապանծ ու վէս
Գոռում էր, թնդում սաստիկ կատաղած.
Թէ ժայռի վերայ լեռնային գազան,
Թէ կապոյտ երկնում պտոյտող թռչուն
Ուշ էին դնում սրտով քերկրութեան
Նորա ջրերի անոյշ ձայներուն.
Ոսկի ամպերը հարաւի կողմից
Կարծես ձայներուն ուղեկից էին,
Ժայռերը խմբով, խորին լռութեամբ
Փայլուն ալիքները նկատում էին.
Աշտարակները ժայռերի ծայրին
Խիստ նայում էին ամպերի միջով.
Կովկասու ասես դրան մօտ կային
Պահապանները բարձր հատակով:
Ամենայն կողմով Աստուծոյ աշխարհը
Ե՛ւ վայրենի էր եւ հրաշալի,
Բայց անարգանօք նայում էր դեւը
Արարչութիւնը իւր Ստեղծողի:

Դ.

Եւ նորա առաջ մի այլ պատկերի
Կենդանի զարդեր ահա բացուեցան,
Լայն հովիտները պերճ Վրաստանի
Բնութեան շքեղ գորգով ծածկեցան:
Ի՜նչ երջանիկ է այն ճոխ երկիրը.
Սիւնաձեւ ժայռեր, հնչող վտակներ,
Որոնց ջրի տակ պարզ յատակները
Զարդարում են միշտ գոյնզգոյն քարեր.
Կան վարդի թփեր, ուր սոխակները
Գովաբանում են իւրեանց սիրելին,
Որ եւ մնում է միշտ անպատասխան
Նոցա սիրալիր քաղցր գեղգեղին.
Կան ստուար ծիւղեր մեծ սօսիների
Լայն բաղեղներով ծիգ շրջապատած,
Եւ քարանձաւներ, որ եղջերուի
Ապաստաններն են խորշակի դիմաց,
Կեանք, շքեղութիւն, տերեւոց շրշիւն,
Եւ հարիւրաւոր ձայների բարբառ,
Եւ հազարաւոր բուսերի շնչում;
Եւ Միջօրէի խորշակ հեշտարար.

Եւ անուշահոտ ցողով ոռոգուած
Պայծառ գիշերներ,
Մատաղ Վրացուհու աչքերի նման
Փայլուն աստղներ:
Բայց շքեղութիւնը այն պերճ ընութեան,
Բաց ի նախանձից ընաւ ոչինչ քան,
Ոչ նոր զգացմունք, ոչ նոր զօրութիւն
Չզարթեցրեց հար դեւի սրտում:
Նա այն ամենը, ինչ որ տեսնում էր
Արհամարհում էր եւ կամ ատում էր:

Ե.

Հուդալն ալեւոր շինեց իւր համար
Մի տուն բարձրաշէն, մի բակ շրջակայ...
Շատ ջանք, արտասուք թափել են երկար
Նորա ճորտերը այն շէնքի վերայ:
Նորա պատերը ձգում են ստուեր
Լեռների վերայ վաղ առաւօտուն,
Ժայռից կտրած են տաշած սանդուղներ,
Որ աշտարակից գետափ են տանում.
Իշխանի դուստրը մատաղ Թամարը
Երեսը ծածկած սպիտակ քօղով,
Գնում է հանել Արագւի ջուրը,
Այն սանդուղներից վայր իջանելով:

Զ.

Միշտ քարաժայռի ծայրից դէպ ի ծոր
Այն խաւար տունը նայում էր լռիկ,
Բայց այնտեղ մի մեծ խնջոյք կայ այսօր,
Հնչում է զուռնան, լցւում են գինիք:
Իւր մի հատ դուստրը Հուդալ նշանեց.
Կոչեց խնջոյքի իր ողջ ընտանիք.
Տան յարկի վերայ զորգազարդ ու մեծ,
Հարսի հետ նստած են ընկերուհիք.
Ուրախ խաղերով, անոյշ երգերով
Անցանում է շուտ օրը կարճատեւ,
Արդէն արեւու կէս բոլորակը
Ծածկած է հեռի լեռների յետեւ:
Երգում են նորա ծափ հարկանելով,
Եւ մատաղ հարսը իւր դափն է առնում,
Ու գլխի վերայ պտոյտ բերելով
Թռչունից թեթեւ վեր վայր է ոստնում:
Կամ յանկարծ կանգնում,
Հորս կողմն է նայում,
Եւ նախանձայոյզ արտեւանց տակից
Արտասրով թրջած աչքերն են փայլում.
Մերթ շրջեցնում է իւր սեւ յօնքերը
Եւ մերթ դէպ ի վայր կորանում է նա,
Եւ չնաշխարհիկ նորա ոտները
Սահում, սլանում են այն զորգի վերայ,
Եւ մի մանկական բերկրութեամբ լցուած
Ծիծաղում է նա:
Սակայն դողդոջուն ջրի երեսին
Լուսնի նշոյլը խաղալով հեգիկ,
Հազիւ կարող է այն նորա ժպտին
Լինել հաւասար, այնպէս գեղեցիկ.
Կեանքի պէս ժիր էր
Քաղցր ժպիտն այն,
Առոյգ ու զուարթ էր
Մանկութեան նման:

Է.

Վկայ է աստղը կէս գիշերային,
Վկայ են ելքն ու մուտքն արեւու,
Որ ոչ մի իշխան պարսից աշխարհին
Չէ տուել համբոյր այդպէս աչերու:
Տաք օրերի մէջ, ոչ մի ժամանակ
Հով շատրուանը Շահի հարէմում
Չէ զովացրել այդպիսի հատակ
Մարգարտանման ցողովն իւր փայլուն.
Դեռ ոչ մի անգամ երկրային ձեռներ
Չեն հիւսել այդպէս գեղեցիկ մազեր.
Քանի որ դրախտը աշխարհից գնաց,
Երդւում եմ որ դեռ, ոչ մի ժամանակ,
Այդպէս գեղեցիկ մի կոյս չէ ծաղկած
Հարաւոյ կողմի արեգական տակ:

Ը.

Հուդալի ժառանգ մի հատիկ դուստրը
Վերջին անգամն էր, աւա՜ղ, կաբաւում;
Ազատութեան առոյգ մանուկը
Սպասում էր նորան վաղ առաւօտուն.
Սպասում էր նորան օտար ընտանիք,
Ողբալի օրհաս, օտար հայրենիք.
Շատ անգամ զաղտնի խորին կասկածը
Նորա պարզ դէմքը մթնացնում էր.
Սակայն եւ նորա բոլոր շարժմունքը
Այնպէս վայելուչ, այնպէս ազդու էր,
Որ եթէ Դեւը այն կողմ թռչելիս,
Այն կուսի վերայ մի անգամ նայէր,
Ցիշելով նախնի իւր եղբայրները,
Իսկոյն կը դառնար, հոգոց կը հանէր...

Թ.

Դեւը նայում էր... յանկարծ իւր սրտում
Զգաց խռովութիւն մի անմեկնելի,
Դատարկութիւնը անզգայ հոգում
Լցուեցաւ ծայնով մի շնորհալի.
Նորից իմացաւ սէր ու սրբութիւն,
Գեղը եւ բարին ճանաչեց նորից,
Եւ զմայլում էր երկար ժամանակ
Պատկերի քաղցր երեւութներից:
Իւր անցած քաղդի յիշատակները
Անընդհատ կարգով ու երկարատեւ,
Գլորվում էին նորա առաջը,
Կարծես թէ աստղեր մէկ մէկու յետեւ:
Անտեսանելի զօրութեամբ կապուած,
Մի նոր այլ վշտի նա ծանօթացաւ,
Զգացողութիւնը նորա մէջ յանկարծ
Հարազատ լեզուով կարծես խօսեցաւ:
Վերածնութեան արդեօք նշան էր.
Նա այլ չէր կարող զատանել մտքում
Փորձանք պատճառող նենգութեան խօսքեր.
Թէ մոռացել էր.
Չէ, մոռանալը Աստուած չէ տուել,
Տուած իսկ լինէր, նա այդ չէր առնել:

. . . . . .

Ժ.

Իւր հաւատարիմ նժոյգը տանջելով,
Արեգակն մայր մտանելիս
Անա անհամբեր եւ շտապելով,
Փեսան հարսանեաց խնջոյք է գալիս:
Հասնում է յաջող դէպ ի Արագայ
Շքեղ ափերը գեղեցկադալար.
Նորա յետեւից ճանապարհի վրայ
Ուղտերի կարգեր ձգվում են երկար:
Ծանրաբեռնուած շատ ընծաներից,
Նոքա տեղերից հազիւ են շարժվում;
Եւ Սինոդալու տէրը առաջից
Պերճ կարաւանի գնացքն է վարում:
Գեղեցիկ մէջքը զօտով է քաշած,
Փայլում են նորա սուրն ու դաշեակը,
Եւ նկարներով քանդակագործած
Կախուած է թիկնից մեծ հրացանը.
Խաղում է հողմը փչելով հանդարտ
Նորա շուխայի արծակ թեւերով,
Որոնց ծայրերը ժապաւինազարդ,
Սիրուն փայլում է արեւի լուսով:
Սանձն է փունջերով, թամբն է թանգագին,
Գոյն գոյն մետաքսով ասղնեգործած.
Եւ նժոյգն աշխոյժ ոսկեզոյն ղեղին,
Բոլոր քրանքի փրփրով պատած:
Անով, խորտկալով, ականջ շարժելով,
Այն Ղարաբաղու առոյգ սերունդը
Դիմում է արագ դար ի վայր շաւղով
Դէպ ի փրփրած ոստուն ալիքը:
Ճանապարհը նեղ եւ վտանգաւոր,
Ձախ կողմը նայես, կանգնած են ժայռեր,
Աջ կողմը ասես, անդունդ մի կայ խոր,
Իսկ ժամանակն արդէն շատ ուշ էր:
Ձիւնապատ ծայրերը բարձր լեռների
Կորուսին արդէն իւրեանց ներկերը,
Բարձրացաւ շորս կողմ մէջ եւ գոլորշի,
Կարաւանն շուտեց իւրեան ընթացքը:

ԺԱ.

Կայ ճանապարհին մատուռ մի անա...
Ուր վաղուց ի վեր հանգչի առ Աստուած
Մի իշխանազն, որ սուրը է հիմա,
Ոխերիմ ու շար ձեռքից ապանուած:
Այն օրից սկսած, ամեն անցաւոր,
Ուր որ կշտապէ, հանդէս թէ կռիւ,
Նախ մատրան առաջ սուրը եւ զօրաւոր
Աղօթք է անում ջերմեռանդ սրտիւ.
Եւ այն աղօթքն էր միշտ նոցա պահում
Անհաւատների առեղ դաշոյնից.
Բայց մատաղ փեսան հեռացաւ այժմ
Իւր նախահայրների սովորութիւնից:
Նենգաւոր դեւը շար ցնորքներով
Նորա մտքի մէջ շփոթ էր ձգում;
Որ մռայլապատ խաւար գիշերով
Հարսի շրթունքն էր մտքով համբուրում...
Երկու մարդկային սեւ կերպարանքներ
Նորա առաջը յանկարծ երեւցան,
Եկան բազմեցան յետոյ ուրիշներ,
Զգուշաւ իսկոյն սատ[illegible]ցան...

Ի՞նչ եղաւ արդեօք... իշխանն անվեհեր
Աղանդակների վերայ կանգնած էր,
Ցօնքերի վրայ փափախը քաշած,
Անձայն, անբարբառ, ապշած նայում էր.
Փայլեցաւ ձեռքին եղէգն հրացանի,
Մարակը շաչեց եւ արծուի նման
Ցառաջ արշաւեց ուժով սոսկալի,
Բայց դարձեալ անա թնդաց հրացան.
Իսկոյն մի գոռին խորին հառաչանք
Հնչեցին բոլոր ծործորի միջում;
Երկչոտ վրացիք փախչել սկսան,
Վերջացաւ կռիւն այն իսկ միջոցում:

ԺԲ.

Լռեց ամեն բան.
Երբեմն միայն
Զանգակի ձայներ անդ հնչում էին.
Ուղտերը խոնած
Սարսափով պատած,
Մարդոց դիակներ նկատում էին:
Մեծ կարաւանում ոչինչ բան չկայ,
Մեռած են բոլոր ձիաւորները.
Եւ արդէն նոցա դիակաց վերայ
Շրջան է գործում գիշերահաւը:
Խաղաղ շիրիմը նոցա տեղ չունի
Մենաստանների քարերի տակում,
Ուր նոցա յարգոյ նախահայրերի
Մարմիններն էին շատ անգամ թաղվում:
Քոյրերը մօր հետ քօղերով ծածկած,
Հեռի տեղերից երբէք չեն գալու,
Վշտով, կսկիծով եւ աղօթքներով
Գերեզմանների վերայ ողբալու.
Նորա փոխարէն ճանապարհի մօտ,
Քարաժայռերի ստորոտի տակ,
Մի մարդու ձեռքով ջերմ ու եռանդոտ
Խաչ կրկանգնվի իբրեւ յիշատակ.
Եւ զարնան ամած լայն քաղեղները
Զմրխտանման հիւսուած կազմելով,
Միշտ կրպատատեն նորա շորս կողմը,
Գգուանք ու յարգանք մատուցանելով.
Շատ ու շատ անգամ շաւղից դուրս գալով
Ցոգնած անցորդը մի ջերմ ժամանակ,
Պէտք է հանդարտի օրհնութիւն տալով
Աստուածապարգեւ այն ստուերի տակ:

ԺԳ.

Այծքաղից արագ ձին սլանում է,
Եւ խորմիալով
Ու կտրտուելով
Դէպ ի պատերազմ կարծես դիմում է.
Երբեմն յանկարծ
Ոնգերը բացած,
Կանգնում լսում է հողմի շնչմունքը.
Երբեմն յանկարծ
Կայծ ու հուր դարձած
Գետնին զարկելով հնչող պայտերը,
Բաշն է թօթափում;
Եւ առանց խելքի յառաջ է դիմում:

Կովկասեան տիպ

Ձիաւորը լուռ վերան է նստած,
Եւ քաշի վերայ գլուխը դրած,
Վեր վայր է ընկնում:
Ասպանդակներում՝ ոտները ընած,
Սանձերը վարել չէ կարողանում:
Եւ գլխիցն ասես
Մի աղբիւրի պէս,
Արիւնի առատ հեղեղ է թափում:
Թուշունն երիվար, դու քո տիրոջը
Թռուցիր կուից մի նետի նման,
Բայց Օսեթինի ահեղ գնտակը
Հասաւ քամակից գիշերումն անգամ:

† Մ. ՍԱՏԱԹԵԱՆՑ

[Կը շարունակուի]

ՄՐՑՈՒՄՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Վէպ տիկին Էդգրէն Լէֆլէրի

[Շուէդերէնից]

Եղնսաբէթը սաստիկ վշտացաւ, երբ զարթեց և իմացաւ որ մայրն իրան տուած խոստումը չէ պահել. ոչինչ բան նրան չէր կարող մխիթարել։ Սկիզբը՝ երբ նրան յայտնեցին՝ նա ամենևին չէր ուզում հաւատալ և մի քանի անգամ դնաց աղախնի մօտ ստուգելու, թէ արդեօք մայրն իր քնած ժամանակ, գոնէ չէ՞ր եկել իրան համբուրելու։

Երբ մի քանի ժամանակից յետոյ, արդէն իր կնոջ երկրորդ պսակի լուրն ստացաւ և գնաց իր երեխայոց ետևից։ Նրա վրայ մի ծանր պարտաւորութիւն կար—հաղորդել երեխայոց որ նրանց մայրը իրանց թողել է ընդմիշտ։

Էմիլը երբ լսեց այդ լուրն, առանց երկար մտածելու, յայտնեց, որ ինքն ուզում է անյապաղ գնալ Բերնսօնի մօտ և ապրել նրա հետ միասին։ Առ հասարակ նրա տպաւորութիւնները շատ թռուցիկ բնաւորութիւն ունէին և նա դեռ ևս չէր կարող պարզ հասկանալ, թէ իր մայրիկը երբէք չի վերադառնալու։ Նա երևակայում էր, թէ մայրիկը գնացել էր ճանապարհորդելու և թէև երբեմն շատ կարօտում էր նրան, բայց միևնոյն ժամանակ հետզհետէ վարժւում էր նրա բացակայութեանը։

Իսկ Եղնսաբէթի տասն երեք տարին շուտով լրանում էր. նրա զգացումներն ու խելքը համեմատելով իր տարիքի հետ՝ աւելի էին զարգացած. նա ամենևին չէր կարողանում բաւականանալ այդ կնոջ բացատրութիւնով։ Ինչու համար է իր մայրը միայնակ գնացել արտասահման Բերնսօնի հետ. ինչու համար է նա այնտեղ մնացել և այնտեղ էլ ապրում է թողնելով իր երեխայոց և իր մարդուն։ Եղնսաբէթը շարունակ այս հարցումներն առաջարկում էր իր հօրը և տատին, և նրան զրաղեցնում էր այն միտքը թէ արդեօք վատ վարմունք չէ՞ իր մօր վարմունքը։

Բայց այդ հարցումների պատասխանը Եղնսաբէթը չէր կարողանում ստանալ։ Մի՛թէ կարելի էր բացատրել երեխային թէ՝ կան այնպիսի զգացմունքներ, որոնք կարող են խեղդել պարտաճանաչութեան զգացմունքը և հարկադրել կնոջը մոռանալ իր մարդուն, իր երեխայոցը, իր ազգականներին։

Բացի դրանից երեխայի ներկայութիւնով չէր կարելի մօր վարքը պախարակել։ Բոլոր հարցումներին միշտ միևնոյն պատասխանն էր ստացւում.—«Այդ բանն այժմ դու դեռ ևս չես կարող հասկանալ. կըմեծանաս, կիմանաս»։

«Տայ Աստուած, որ նա երբէք չըհասկանայ այդ բանը»,

մտածում էր հայրը, որը ինքն իսկ չէր ուզում հասկանալ պատահած երևույթը. ամենայն օր այդ նոյն բանը նրան շարունակ երևում էր նոր, անբնական և անհերևակայելի։

Իր կնոջ վարմունքը նա յանցանք չէր համարում. Արլային նա ընդունակ չէր համարում յանցանքի. նա հաւատում էր, որ երկուսն էլ ընկել են մի ինչ որ գաղտնի ճակատագրի ազդեցութեան տակ և այդ բոլորը պատահածի համար երկուսն էլ մեղաւոր չէին, ոչ հոգով և ոչ մարմնով։ Զննելով այդ բոլորին, Արլան նոյնչափ թանգ էր ընկել համար. նա տխրում էր այդ մասին, մըտածում էր նրա մասին և անհանգիստ էր լինում՝ երևակայելով ինքն իրան թէ Արլան երկար ժամանակ գընացել է միայն ճանապարհորդելու—միայնակ և անպաշտպան։

Եղիսաբէթն ուսումնարան էր յաճախում և այնտեղ իր աւելի փոքրաւոր հասակակիցների ազդեցութեան տակ՝ սկսել էր բոլորովին ուրիշ գաղափար կազմել իրանց տանը պատահած ընտանեկան դրամայի վրայ։ Նա լսում էր շարունակ և իմանում՝ որ իր մայրը շատ ամօթալի է վարուել. որ այդ պատճառով Նրան ամենքն արհամարում են, թէ Բերնսօնը չար մարդ է և թէ նա է համոզել Արլային թողնել իր երեխաներին։ Եւ փոքրիկ Եղիսաբէթի զգայուն սրտի մէջ դէպի Բերնսօնը եղած սաստիկ սէրը տեղի տուաւ նոյնքան աւելի սաստիկ ծայրահեղ ատելութեան։ Բայց միևնոյն ժամանակ նա աւելի գրգռուեց իր մօր դէմ, մանաւանդ մի քանի բաների համար, որը նա չէր կարողանում ներել Արլային։—Ինչու համար նա թոյլ տուաւ որ Բերնսօնը համբուրէ իրան՝ Եղիսաբէթին այն երեկոյ, ինչու նա թոյլ տուաւ Էմիլին աղօթել Բերնսօնի համար, ինչու համար Եղիսաբէթից խոստում առաւ միշտ սիրել Բերնսօնին։

—Նա ինձ ուխտադրուժ դարձրաւ, հեծկլտալով ասում էր Եղիսաբէթն իր տատին։ Ես խօսք տուի որ միշտ կըսիրեմ Նրան, իսկ ես Նրան այժմ ատում եմ։

Բայց մի կէտ կար, որն ամենից աւելի կարևոր էր երևում Եղիսաբէթի աչքում. այդ այն էր, որ մայրը գնացել է առանց Նրան մնաս բարև ասելու։ Ուրեմն մօր վերջին խօսքերը սուտ էին, որովհետև նա խոստացաւ առաւօտը գալ Եղիսաբէթի մօտ և չեկաւ։

Արլան ապրում էր իր մարդու—Բերնսօնի հետ արտասահմանում մի քանի տարի շարունակ, մեծ համալսարանական քաղաքում, ուր Նրանք երկուսն էլ յատկապէս գիտութեան ուսումնասիրութիւնով էին զբաղած։

Այս զոյգը սովորական ընտանիքների նման չէր. օրինակ մարդը տնից դուրս մի բանւոր է տան համար, իսկ կինը տան մէջ օջախի պահապան. մարդը դուրսը հասարակութեան մէջ եղած ժամանակ, միշտ մտածում է իր տան վրայ, ուր կինը նստած, սպասում է իր մարդուն և մտածում է միայն Նրա մասին։ Ո՛չ, սրանց կեանքն ամենևին նման չէր այդ միաձև ձանձրալի կեանքին։ Այս ամուսինները՝ Արլան և Բերնսօն միշտ ընկեր էին միմեանց թէ ուրախութեան և թէ տխրութեան, վերջապէս բոլոր իրանց գործերին։ Արլան երբէք տունը մենակ չէր մնում առանց մարդուն, նա ընկերանում էր Նրա պարտականքներին և զբաղմունքներին։ Արլան մասնակցում էր Բերնսօնի բոլոր աշխատութիւններին, իսկ վերջինս Նրան օգնում էր, իրան հասկանալու և հետեւելու ու գիտութեան մէջ յառաջադիմելու մէջ։

Որովհետև Արլայի գիտութեան պաշարը շատ պակաս էր, այդ պատճառով նա Բերնսօնի ոչ միայն ընկերն էր, այլ և նրա աշակերտուհին, և որովհետև ինքը Բերնսօնից աւելի քիչ սկեպտիկ էր, ուստի Նրա յայտնած նոր տեսութիւնները ընդունում էր մեծ եռանդով, նոյն իսկ շատ անգամ առանց հակառաճառելու։ Արլան կամենում էր միշտ առաջ գնալ, առաջ և առաջ, առանց ամենեւին յետ նայելու.—որքան նոր էին Բերնսօնի քարոզած մտքերը, այնքան Նրանք աւելի նկատելի կերպով որոշում էին Արլայի նախկին հայեացքներից և այնքան աւելի Արլան գրաււում էր Նրանցով։ Այդ կինն ստեղծած էր ծայրահեղութիւնների համար. ոչինչ որ առաջ՝ նա տարբց տարբ, ճնշում էր իր „ես"-ը, որպէսզի իր կենսական խիստ կանոնների համեմատ ապրի, նոյնքան էլ նա այժմ առանց յետ նայելու անձնատուր էր եղել նոր հրաւիրներին։ Ամեն մի կողմնակի դիտող կարող էր ենթադրել թէ նա բոլորովին մի այլ կին է դարձել. բայց իսկապէս նա նոյնն էր, ինչ որ և առաջ. կրքոտիկական լրջութիւնից զուրկ, ձևասպաս, և կոյր երկրպագու իր ստեղծած խղճալին։ Զանազանութիւնը նրանումն էր միայն, որ նա այժմ արհամարհում էր այն, ինչի որ առաջ երկրպագում էր, որ այժմ արտաքին քաղաքավարական ձևերը նրա համար նոյնչափ ատելի էին, որքան և առաջ այդ ձևերից հեռու մնալը, զանազանութիւնն խիստպէս նայուածքների մէջ էր և ոչ թէ բնաւորութեան։ Թէ Արլան և թէ Բերնսօնը չէին կարողանում իրանց հաշիւ տալ թէ որքան տարբերը են վերաբերւում իրանք նոյն իսկ իրանց երկուսի քարոզած դաղափարներին. Արլայի համար ազատամտութիւնը կրօն էր դառել, որին նա համարձակ երկրպագում էր. իսկ Բերնսօնն ընդհակառակը հաւատից զուրկ էր, նա չէր հաւատում առ հասարակ ոչ մի հաւատական ձևականութեան և դժգոհ էր նոյն իսկ իր սեփական տեսակէտից իբրև սկեպտիկ։ Բայց Նրանք երկուսով ոչ միայն գիտական տէօրիաներն էին ուսումնասիրում, այլև կեանքը և մարդկիներին։ Բերնսօնի գիտութիւնը յառաջադիմում էր հոգեբանութեան և արուեստի հետ ձեռք ձեռքի տուած։ Նա նիւթ էր հաւաքում նոր մեծ դրամայի համար, որը հետզհետէ աւելի և աւելի սրմատական կերպարանք էր ստանում։ Բանւոր դասակարգի կեանքն ուսումնասիրելու նպատակով, նա ծպտեալ շորերով գնում էր մեծ քաղաքների աղքատ թաղերը և Արլան այդպիսի դէպքերում սղամարդի զգեստ էր հագնում, որ կարողանայ աննկատելի կերպով ամուսնուն ընկերանալ։

Բերնսօնը մի առանձին զգաստութիւն էր զգում տեսնել Նրան այդպիսի փոխած շորերով և այդպիսի մի կոպիտ հասարակութեան մէջ, ուր նա աշխատում էր հնար եղածին չափ լաւ վերցնել տղամարդոց ձևերը, սիգար էր ծխում և գինու բաժակը դատարկում էր, մինչդեռ միայն Բերնսօնը գիտէր, որ այդ կոպիտ արտաքին ձևերի տակ թագնուած է գողտրիկ, քնքոյշ և բոլոր հոգով իրան նվիրուած կինը։ Արլան Բերնսօնի համար առողջ և ազնիւ կանացիութեան իդէալ էր։ Բերնսօնը դեռ ևս չէր նկատել և իրան հաշիւ չէր տուել թէ ինչպէս Արլան այժմ բոլորովին նման չէ այն կնոջ, որին նա առաջին անգամ ծանօթացաւ և առաջին անգամ սիրեց, թէ որքան Արլան հետզհետէ արտասովորանում է իր մէջ նոյն

իսկ Բերնսոնի անձնաւորութիւնն իր բոլոր թերութիւններով և ծայրահեղութիւններով, երբև նոյն իսկ Բերնսոնի ստեղծագործութիւնը, վոչնանակ առաջւան պէս լինելու Բերնսոնի ղդէալական հակապատկերը, որին առաջին անգամ Բերնսոնը հանդիպեց և երկրպագեց։

Բերնսոնը մանկութիւնից վարժւել էր միայնակեցութեան, առանց մտերմական յարաբերութիւնների։ Նա իր մօրը չէր յիշում, իսկ հօրը շատ վաղ սովորեց արհամարհել։ Ուսումնարանում նա շատ յաճախ էր վիրաւորանքի ենթարկւում իր ընկերների կողմից, որոնք նրան անւանում էին „աբրեցող Բերնսոնի որդի“ և թէպէտ նա երբէք չէր սիրում հօրը, բայց բնութիւնից շատ հպարտ և գրգռւող լինելով, չէր կարողանում դիմանալ, որ հօրը հայհոյեն իր ներկայութիւնով։ Այդ հանգամանքն առիթ էր տալիս շատ ընդհարումների։ Նրան առհասարակ վատ ընկեր էին համարում, չնորհիւ նրա անհնազանդ, գրգռւող և եսական բնաւորութեան, որը երբէք ուրիշի ցանկութիւններին չէր ենթարկւում։ Նոյն իսկ այդ պատճառով նրան չէին սիրում և ուսուցիչները. բայց թէ ընկերները և ուսուցիչները նրան յարգանք էին ցոյց տալիս նրա խելքի և ընդունակութեան չնորհիւ, միևնոյն ժամանակ երանց հեռու պահելով նրանից և չմոռանալով նրան։

Արլայի հետ ծանօթանալով Բերնսոնն, առաջին անգամն ընկաւ կնոջ վասիուկ ազդեցութեան տակ։ Սէրը նրան աղնւացրաւ և նրա եսականութիւնն այժմ մի այնպիսի ձև էր ստացել, որ չէր կարող զզւելի տպաւորութիւն թողնել իր կնոջ վրայ։ Բերնսոնն իր կնոջ մասին նախանձում էր և վշտանում էր, որ ինքն ամբողջապէս չէ տիրապետել նրան, այլ թէ մի կապ կայ, որի հետ նա կապւած է իր անցեալով։

Երբ Արլան եկաւ նրա մօտ արտասահման, նա չեկաւ սիրող կնոջ կերպարանքով, այլ երբև մինչև սրտի խորքը վշտացած մայր, որին ապահովացնն ընդ միշտ բաժանել է իր երեխաներից և որը իր մէջ քաջութիւն չէր գտնում նոր բախտաւորութիւն գիմնել անցեալի աւերակների վրայ։ Նա մի քանի ժամանակ իրան հեռու պահեց Բերնսոնից, մտածելով որ, այն սէրը որ ինքը տալիս է Բերնսոնին մի տեսակ դաւաճանութիւն էր երեխաների համար։ Բայց իսկական պահի ժամը հասաւ և նրանց երկուսի համար.—նրանց սէրը յաղթանակեց բոլոր արգելքներին. նա այլ ևս մայր չէր, նա միայն կին էր և անբաժան զւարճանում էր նրանով, ինչ որ կեանքի մէջ ամենամեծ երջանկութիւնն էր համարել. նա սիրում էր և անձնատուր էր եղել բոլորը հոգով, չբմտածելով ոչ ապագայի և ոչ անցեալի մասին. ամեն բան մոռանալով սիրելի մարդու գրկի մէջ։ Պղծի խայթը որը նա զգում էր իր ուխտադրժութեան և պատճառած վշտի վրայ մտածելով, այժմ ոչնչացել էին նրա նոր երջանկութեան առաջ, որ նա շնորհիւ իր նոր տեսակէտի, բոլորովին օրինաւոր էր համարում։

(Կը շարունակւի)

Հեռագիր

«Մշակը» ս. Էջմիածնից իր յատուկ թղթակցից հետեւեալ հեռագիրներն է ստացել.

„Ապրիլի 24-ին վեհարանի կնիքները սինոդի անդամների եւ իշխանութեան ներկայութեամբ կոտրեցին եւ հանդուցեալ Կաթողիկոսի դագաղը վեր դրեցին: Յայտնւեց Կաթողիկոսի դրամարկղում 1800 ռուբլի: Հանդուցեալի ծառայ, Հաջի Յակոբի վրայ կասկած ընկնելով՝ նրան պատասխանատուութեան եւ քննութեան ենթարկեցին: Հաջի-Յակոբը, հարց ու փորձից յետոյ, խոստովանւեց որ իր մօտ ունի Կաթողիկոսի փողերից 11,500 ռուբլի, եւ մի առ մի յայտնեց թէ ինչ անձանց Էջմիածնում եւ Թիֆլիսում ինքն դիտաւորութիւն ունէր բաժանել այդ դրամները: Այսօր ստիկանութիւնը դատաստանական քննիչի կարգադրութեամբ խուզարկութիւններ է անում՝ Հաջի-Յակոբի հետ կապ ունեցող անձանց տներում:

Ապրիլի 30-ին

„Բռնտարկւած են Ջոկ-Ջոկ Հաջի-Յակոբը եւ երկու երեք ուրիշ անձինք: Դատաստանական քննութիւնն վարում է Երեւանի պրոկուրորը, իր օգնականի հետ միասին: Բռնւած են արդէն մեծաքանակ արծաթեղէններ, ոսկեղէններ, թանգագին իրեր, խաչ, եպիսկոպոսական մատանիներ, կաթողիկոսական մուշտակ եւ այլն: Կասկածւում՝ են եւ այլ անձինք: Դարձեալ նոր խուզարկութիւններ են կատարւում: Դրամական կորուստը համարւում՝ է առ այժմ՝ 30,000 ռուբլի:“

—

ժամանակագրութիւն

Վեհափառ Հայրապետ **ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** թաղումը տեղի ունեցաւ ապրիլի 22-ին։ Թաղմանը ներկայ էր մեծ բազմութիւն, շատ տեղերից պատգամաւորներ էին եկել։ Պսակներ էր դրւած հանգուցեալ Հայրապետի դագաղին։ Ս. Տաճարում, գերեզմանի վրայ և սեղանատանը ատենաբանութիւն արին թեմիս նախկին առաջնորդ սրբազան Արիստակէս եպիսկոպոսը, սենոդի անդամ սրբազան Արիստակէս Դաւթեանը, սարկաւագ Ստ. Եղիազարեանց, իսկ պ. Գ. Բարխուդարեանը կարդաց մի ոտանաւոր։

*

Ս. Էջմիածնից մեր լուսանկարը ուղարկել է մեզ Վեհափառ Հայրապետի յուղարկաւորութեան և թաղման հանդէսի պատկերները, բայց դրանք անյաջող լինելով, անյարմար համարեցինք տպագրել։ Թիֆլիսի մեր բաժանորդները, որոնք կը հետաքրքրւեն այդ պատկերներով՝ հրաւիրում. ենք շնորհ բերեն խմբագրութեանս դրասենեակը և տեսնեն այդ նկարները։

Պատկերների անյաջող լինելը թէ մեր թղթակիցը և թէ լուսանկարը

Վեհափառ Հայրապետի յուղարկաւորութեան և թաղման հանդիսին վերին աստիճանի կարգապահութիւն չբլինելովն են պատճառաբանում։

—

Էջմիածնից մեզ հաղորդում են.— Վեհափառի կայքը և կահ-կարասիքը ցուցակագրելիս՝ նկատւել է, որ Վեհափառի սնդուկի վրանքը փոխւած է եղել, որ և առիթ է տւել Հաջի Յակոբի վրայ կասկածելու։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ ուղարկւեցաւ՝ երբև նէր՝ «Արութիւն և Մանուէլի» բաժանորդներին „Մի երես մեր նորագոյն պատմութիւնից» գրքոյկը, հեղ. Դ. Աղայեանցի։

—

Շաբաթ, ամսոյս 11-ին տեղի կունենայ բոլորաձև խաւարումն լուսնի։ Խաւարումն կըսկսի Թիֆլիսի ժամանակով, երեկոյեան 7 ժամից 40 րոպէ անց, և կը վերջանայ 11 ժամից 10 րոպէ անց. խաւարումն տեսանելի կը լինի Աւստրալիայում, Ասիայում, Աֆրիկայում և Եւրոպայում։

—

Ամսոյս 2-ից երկրս Կառավարչապետի պալատի դահլիճներում ի ցոյց են դրւած և վաճառւում են Թիֆլիսի Բարեգործ. Ընկ. ուսումնարանների աշակերտուհիների ձեռագործները։

—



Կովկասեան զէնքեր

«Каспій» լրագիրը իր մի համարի մէջ ցոյց տալով, թէ ինչպէս Բագուն պէտք ունի կլասիկական գիմնազիայի, լսում է, որ ըէալական ուսումնարանի մի ուսուցիչ՝ Ա. Ի. Պ. մտադիր է խնդրել Կովկ. Ուս. Հոգաբար. բանալու Բագուի մէջ մի մասնաւոր պրոգիմնազիա, որի ծրագիրը սկզբից 4 դասարան լինելով, կարող է ապագայում, գործի յաջող ընթացքի ժամանակ, բարձրանալ մինչև 8 դասարանեան գիմնազիայի։

—

Վիէննայի «Հանդէս Ամսօրեան» հաղորդում է, որ Ռուսաց կառավարութիւնը մտածում է Սև ծովը Ազովի ծովի հետ կապել մի նաւարկելի ջրանցքով։ Այս գործը գլուխ հանելու համար կազմուել է մի ընկերութիւն՝ 100,000,000 ֆր. դրամագլխով, որը մտածում է այդ գործը կատարել, եթէ ստանայ 91 թուի առանձնանշնորհութիւնը։

Աշխատութիւնները եթէ այս տարի սկսուեն, վեց տարուայ ընթացքում պիտի վերջանան։

—

Բացի մի քանի ուրիշ ցուցահանդէսներից, այս տարի Մոսկվայում կը բացուին երկու ուրիշ ցուցահանդէսներ, —էլեքտրական և հրդեհի դէմ եղող գործիքների։

Էլեքտրական ցուցահանդէսում շինուելու է մի առանձին սրահ, ուր կարելի է տելեֆոնով լսել կոնցերտներ ու ներկայացումներ և միաժամանակ 30 անձի լսելու համար պէտք է յարմարացնեն այդ տելեֆոնները։

—

Թիֆլիսի Վարժուհիների Ընկերութիւնը, այսօր, Թիֆլիսի Կրուժոկում կայացնելու է սլատանիների համար Լերմոնտովեան առաւօտ, ուր պիտի կարդացուեն դասախօսութիւններ տաղանդաւոր բանաստեղծի կենսագրութեան և նրա մի քանի հեղինակութիւնների մասին։

Դրանով սկսւում է Կովկասում ռուս նշանաւոր բանաստեղծ Լերմոնտովի մահուան յիսնամեակը։

Այդ առիթով մենք յարմար համարեցինք «Տարազի» ընթերցողներին տալ բանաստեղծի նշանաւոր գրուածքներից մէկի՝ Դեւի թարգմանութիւնը այս համարից սկսած։

„ԴԵՒԸ“ (Демонъ) թարգմանել է հայերէն հանգուցեալ Մ. Սադաթեանը 1863 թուին և տպագրել նոյն տարուայ Հիւսիսափայլի մէջ։

Մ. Սադաթեանը իր այդ թարգմանութիւնով անուն է ստացել և համարեա ծանօթ է հայ գրական աշխարհին որպէս մի լաւ թարգմանիչ։

—

Շուլավէրից մեզ խնդրում են հրատարակել. „Աչքի առաջ ունենալով, որ մեր գիւղի ուսումնարանի հոյակապ շինութիւնը կիսաւարտ է մնացել եւ փչանում է աւերիչ հանգամանքներից, խնդրում ենք Թիֆլիսաբնակ մեր համագիւղացի հարուստներին նիւթապէս օգնել մեզ կառուցանելու մնացած շինութիւնը։ Մեր գիւղացի հասարակ դասակարգը զուրկ լինելով նիւթական միջոցներից, եւ փոքր ի շատէ հասկացող դասակարգն էլ բաժանուած լինելով կուսակցութիւնների, մնում է այդ համակրելի գործը գլուխ բերելու մեր հեռաւոր եւ Թիֆլիսաբնակ համագիւղացիների վրայ, իսկ մենք յանձն ենք առնում ամեն անձնական անախորժութիւններ մեր մտադրութիւնն իրագործելու։

Նուիրատուութիւններ կարող են ուղարկել այս հասցէով. Шулаверы *(Тиф. губ.)* Вахтангу Меграбянъ“.

Գեղարուեստ

Թատրոն

Բանկի Թատրոնում տ. Գորեւայի ներկայացումները վերջացան, իսկ պ. Պետիպայինը դեռ շարունակւում են Քաղաք. Թատրոնում։ Երկու Թատրոնն էլ ժողովուրդ շատ քիչ է յաճախում։ Երևի Թիֆլիսի Թատրոնական հասարակութիւնն սպասում է տաղանդաւոր դրամատիկական դերասանուհի տիկ. Եօրմոլովային, որ ամսոյս 15-ին տեղս կըլինի։ Աստենք թէ Գորեւան մի առանձին աստղ էլ չէր մեր բեմի համար, բայց տ. և պ. Պետիպաներին արժէ տեսնել. մանա-

ւանդ պ. Պետիպան մի քանի պիէս-Ներում շատ գեղեցիկ և մինչև անդամ հիացնելուն չափ սքանչելի է։ Անցեալ ուրբաթ օրը՝ պ. Պետիպայի բենեֆիսն էր, սակայն թատրոնը բոլորովին լիքը չէր։ Այսօր պիտի Ներկայացնեն անմահ Մոլիէրի Դոն-Ժուանը։ Արժէ տեսնել թէ այդ պիէսը և թէ պ. Պետիպային Դոն - Ժուանի դերում, որ մենք վստահ ենք շատ լաւ պիտի կատարէ։

—

Բագւից մեզ գրում են, որ պ. Պետրոսեանի Ներկայացումները յաջող չեն գնում հանդիսականների կողմից։

Զարմանալի չէ բագւեցիների անտարբերութիւնը դէպի հայ բեմը, և շատ երաւացի կերպով „Тиф. Лист.“ իր ուրբաթ օրւայ №-ում այս առիթով պախարակում է բագւեցիների անտարբերութիւնը և անտեղի ոգևորութիւնը ու հրապոյրը։

—

Ձեռնածու և հմայող պ. Ասպիոտին վորձերը, չընայած իրանց հետաքրքրութեան, չդրաւեցին Թիֆլիսցիներին։ Պ. Ասպիոտին աւելի Հարպիկ էր իր վորձերն անում, քան Թիֆլիսին յայտնի պ. Լէոցը։ Մենք մասամբ վերադրում ենք հանդիսականների կողմից պարոնի անյաջողութիւնը իր վորձերը ցերկրումն ցոյց տալուն։

Երաժշտութիւն

Մեր երիտասարդ երգիչ պ. Ամիրջանեանն ամսոյս վերջին ուղևորւում է Միլան։ Պարոնը իր վերջին կոնցերտը ամսոյս 11-ին պիտի տայ։ Ցանկալի էր, որ մեր երաժշտասէր հասարակութիւնը իր Ներկայութեամբ այդ կոնցերտին մի՛ջոց տայ պ. Ամիրջանեանին լրացնելու իր Հանապարհածախսը։

—

Նւագնող տ. Շուն երկու կոնցերտ տուաւ Բանկային թատրոնում, երկու անգամն էլ համարեա թէ թատրոնը լիքն էր։ Նւագնող տիկնոջ կոնցերտը մի առանձին տպաւորութիւն չէ թողնում լսողի վրայ և յանդգնութիւն է մի ամբողջ երեկոյ զբաղեցնել հանդիսականներին միմիայն շըշըւոցով, և մի ինչ որ դաշնամուրի վրայ աննշան ածողով։ Բագւայ Каспій լրագիրը տ. Շուի կոնցերտի մասին Թիֆլիսից ստանալով հեռագիր, որ նա մեզ մօտ մեծ յաջողութիւն է ունեցել, իր կողմից աւելացնում է, որ դա զարմանք չէ, քանի որ Թիֆլիսցիները „ընդունակ են ամեն տեսակ ըէկլամներից հրապուրւելու։ Տ. Շուի մասին եղած ըէկլամները Նիկիտայի ըէկլամներից պակաս չեն»...

Նկարչութիւն

Տիկին Մարգարիտ Ալէքսանեանի դեղագիր այբբի կաղապարները արտասահմանից արդէն ստացւել են



Կովկասեան երաժշտական գործիքներ

ԼԷԶԳՈՒ ՊԱՐ



Թիֆլիսի մաքսատանը և մինչև Ներկայ մայիսի կէսը լոյս կըտեսնի։ Բաժանորդագրութիւնը շարունակւում է մինչև մայիսի 15-ը։

—

Նկարիչ պ. Տէր-Աստուածատրեանի ալբոմի բաժանորդագրութիւնն էլ նոյնպէս շարունակւում է։ Ցանկացողները կարող են բաժանորդ գրւել Կենդրոնական Գրավաճառանոցում կանխիկ վճարելով 3 ր.

—

Լսում ենք, որ մեր Նկարիչներից մի քանիսը առաջիկայ շաբաթ մի քանի օրով իրանց վերջին Նկարները պիտի դնեն ի ցոյց հասարակութեան։

—

Թղթակցութիւն

Շուշի, 21 ապրիլի 91 թ.

Օրհասական պատերազմ է մղւում մեր երկրի լայնատարած դաշտերում. պատերազմ փոքրիկ միջատների դէմ. ահագին մարդը, զինւորած դէպքին յարմար զէնքերով, կռւում է, կոտորում, մանը արարածների անկուշտ բերանից իր հացն է խլում։

Այդ թշնամին, որ սոսկալի է իր մանրութեամբ, մորեխն է, որ այժմ պատել է երկիրը, ծնւում է օրէցօր, աւելի և աւելի ահագին տարածութիւններ է նւաճում։ Վճռական ըոպէ, կեանքի և մահուան խնդիր է. և գործում են վերին աստիճանի լարած եռանդով։

Ղարաբաղ, Զանգեզուր, Զուանշիր, ամեն տեղ, ամեն գաւառակում մորեխի ահն է. ոչ մի ժամանակ դեռ այսպիսի մորեխ չի եղած այս կողմերում. մարդկային երևակայութիւնից հեռու է այն սոսկալի քանակութիւնը, որ դուրս է թափւում ամեն տեղ սերմանած ձիւաններից. եթէ դրա կէսը ողջ մնայ, ամեն բարեկեցութեան վերջ կըլինի, որովհետև մորեխը կուտի մեր երկիրը և էլը քաղցած կըմնայ։ Հազարաւոր պուդ ձիւաններ են հաւաքել, ոչնչացրել, բայց այժմ հարկաւորը է ահագին ոյժ, ահագին քաջութիւն սոսկալի թշնամուն անվնաս դարձնելու համար։

Գիւղական տարրը ամբողջապէս այդ կռւի գործով է զբաղւած. հազարաւոր գիւղացիներ տարւայ այս ժամանակ իրանց գործը թողած՝ գնացել են հեռաւոր տեղերում մորեխ ջարդելու. աշխատանքը, ինչպէս ասում են, երկար կըտևի, գուցէ ամսից աւել։ Գաւառական իշխանութիւնները այդ գործով են զբաղւած, հազարաւոր մարդկանց գլուխ կանգնած արշաւանքներ են գործում զանազան տեղեր, նոր բացւող ցանքերը սով տարածող բերաններից ազատելու համար։ Ազգաբնակութիւնը ահագին զոհեր է անում, որպէսզի կարողանայ հանգիստ ապրել. այդ զոհերին մասնակից չէ, գոնէ մինչև այժմ, մեր քաղաքը։ Թէև ընդհանուր թշւառութեան ժամանակ միահամուռ և ընկերական օգնութիւնը շատ գեղեցիկ ոյժ է, բայց քաղաքի ազգաբնակութիւնը առ այժմ իրան հեռու է պահում, ամբողջ ծանրութիւնը գիւղացու շլենքին դնելով։ Նահանգական իշխանութիւնը քաղաքից էլ մարդ էր պահանջում, բայց քաղաքացիք խնդրել են ազատել իրանց այդ ծանրութիւնից։ Տեսնենք ինչ կըլինի. ասում են, որ եթէ վերջին ճգնաժամը հասնէ, քաղաքն էլ պիտի տայ 1,500 մարդ։

Ինչ և լցէ, փաստն այն է, որ այժմ գիւղական ժողովուրդը ընդհանուրի բարօրութեան համար օր ու գիշեր գործում է *)։ Չի կարելի չընկատել, որ արշաւանքների կազմակերպութիւնը պակասութիւններ ունի. մեր ժողովրդի մէջ չկայ ինքնուրոյն, գործունէութեան գաղափար. գնում են գործի այն ժամանակ, երբ հրամայեն են ստանում. դժբախտ հանգամանքների մէջ ամենքն այդ են գնում իշխանութեան վրայ, նրանից են սպասում ճար ու դարման։ Եթէ այդպէս չըլինէր, եթէ անողոք թշնամու դէմ կռւելու միտքն ամեն մէկի մէջ հաստատ տեղ բռնած լինէր, այսօր շատ պակասութիւններ չքացած կըլինին։ Երևակայեցէք. սարերից իջնում է գիւղացին, առանց որ և է պատրաստութեան, հետը չունենալով անգամ հաց, շորեր, գնում է հեռու տեղ, դաշտային կողմեր, ուր բոլորովին անպատրաստ մարդուն սպասում են կլիմայական վատ պայմաններ, միացած վատ կերակրի, ջրի հետ։ Այս հանգամանքները թուլացնում են մշակ մարդուն, հիւանդութիւններ են տարածում ամբոխի մէջ։ Այսուհետև էլ ինչ յաջողութիւն կունենայ գործը։

Այստեղի մշակեաց մարդիկ ինձ պատմում են, որ մորեխ ջնջելու գործը վերջին տասը տարիներում՝ այս կողմերի բնակչութեան համար սովորական մի պարտաւորութիւն է դառել. 80 թւականից սկսած ամեն տարի գարնանը կայ մորեխի գործը, որ երբեմն մեծ է լինում, երբեմն փոքր։ Թէև այդպէս, մինչև այժմ ժողովուրդը միայն սիպմամբ է գնում այդ գործի եռեւից։ Այն ինչ, եթէ լինէր հասկացող ժողովուրդ, նա վաղուց գործին կրտար կանոնաւոր և անհրաժեշտ կռւի բնաւորութիւն և միջոցներ կըպատրաստէր թշնամու բոլոր զօրութիւնը խեղդելու տոկունութեամբ և անսխալ սիստեմով չքացնելու.—յայտնի է, որ միայն լաւ կազմակերպած կռիւը կարող է նպատակին հասնել։ Իսկ մեր ժողովուրդը շատ հեռու է այդպիսի բաներ հասկանալուց։ Այսօր, երբ մորեխը ահռելի քանակութեամբ է պատրաստւում ոչնչացնել կանաչները, փոխանակ կատաղի եռանդի, փոխանակ անենայ մարտ մղելու սասսիկ ծարաւի, նկատւում է հին մոլորութեան յաղթանակը. Աստուծու պատիժ է համարւում մորեխը և այս տարւայ բազմանալը, ըստ մեր սիրուն հնամոլ հասկացողութեան, նշան է որ Աստուած չի սիրում որ մարդիկը մորեխը կոտորեն և հէնց այդ պատճառով աւելի բազմանում է նրա քանակութիւնը։

Կռւի կատարեալ յաջողութեան մասին թոյլ յոյս կայ։ Եթէ մեզ չըյաջողուեց բնաջնջ անել մորեխը, մեր երկրին մեծ թշւառութիւն է սպառնում։

—

Այս շաբաթ քաղաքիս բոլոր հայ եկեղեցիների ծանը զանգահարութիւնը յայտնում էր Հայոց ընդհանրական Կաթողիկոսի մահը։ Շուշի քաղաքի ամենատառաջնակարգ մարդիկ անցեալ օրերը ժողով էին կազմել այն մասին թէ հարկաւոր է արդեօք Էջմիածին պատգամաւոր ուղարկել թաղման ներկայ լինելու։ Տեղական „աւագանին“ չըկարողացաւ այդ հարցը լուծել և վճռեց հարցնել Թիֆլիսից, թէ ինչ անեն։ Այսինքն թէ իրաւունք ունին իրանց յարգանքը մատուցանել ամենայն հայոց Մայր Աթոռին, թէ ոչ։ Խօսքը այնպէս է եղել որ, եթէ Թիֆլիսն ինքը մտադիր է այդպիսի բան անելու, այն ժամանակ շուշեցիքն էլ կունենան քաջութիւն ասելու թէ՝ մենք էլ յարգում ենք մեր Աթոռը։ Մեր ժամանակներն այսպէս են արտայայտւում զգացմունքները. ասենք մեզք էլ է այսուհետև զգացմունք սուրբ բառը գործ ածել, քանի որ զգացմունք պիտի նշանակէ սրտից բղխած սէր կամ ատելութիւն, և ոչ թէ ուրիշի արածի պատճէնը վերցնել և գործադրել։

ԵՒՕՓԷ

—

Մահագոյժ

Ն. Վ. ՇԵԼԳՈՒՆՈՎ

Ապրիլի 12-ին, երեկոյեան 8 ժամին, Պետերբուրգում վախճանւեց 67 տարեկան հասակում՝ ռուսաց գրականութեան ամենանշանաւոր դեկավարներից մէկը՝ Ն. Վ. Շելգունով։ Նա վախճանւեց ոչ թէ տանը, իր սիրելիների ու հարազատների գրկում, այլ, ինչպէս վայել է ամեն մի կարիճ և անվախ առաջնորդի,—գաղափարային մոլեռանդ պատերազմի դաշտում, գրիչը ձեռին... Եւ գիտէք թէ ինչպիսի գրիչ էր Նրա ձեռքի բռնած գրիչը, գիտէք թէ՝ ինչի՞ համար գրեց Նա իր կեանքում՝ այդ գրիչով։ Կաթսուլական թեմանները ռուսաց պատմութեան մէջ ամենապայծառ շրջանն է, այդ շրջանում զարթնած և քարոզած մտքերն ու գաղափարները՝ ռուսաց գրականութեան, ռուսաց մրտաւոր կեանքի առաջադիմութեան ոգին են,—իսկ այդ մտքերի և գաղափարների արտայայտող ներկայացուցիչն Ն. Վ. Շելգունովն էր։ Նրա հասարակական-հրապարակախօսական գործունէութիւնը նոյնպիսի մի փայլուն և անմոռանալի շրջան

*) Շուշու գաւառում, ինչպէս պատմում են, այս տարին 16,000 մարդ կայ մորեխ ջնջող։

է ռուսաց պատմութեան մէջ, ինչպէս և 60 թուականները։ Շէլգունովի գրած լուրաքանչիւր տողից՝ բղխում է խորը և անյողդողդ համոզմունք, ապնիւ և ինքնուրոյց գործունէութեան անընկնելի ձգտում... Ընթերցողը ոչ միայն համաձայնում է նրա քարոզած մտքերի հետ, ոչ միայն պարզում և լուսաւորում է իր մտքերի ու զգացմունքների խաւարը, այլ և, դրա հետ միասին՝ ոգևորւում է մի անհիրաւգրելի եռանդով, մի ազնիւ ու վեհ զգացմունքով, որ սկսում է նրան մղել իր „ես“-ից դուրս, մղել դէպի հասարակական գործունէութեան ասպարէզը։ Այսպէս էր գրում Շէլգունովի գրիչը... և, որ ամենից զարմանալին է, այդ միևնոյն յատկութիւնը անվիճելի կերպով պարզանեց մինչև տարրեալ 12-ը, մինչև նրա վաղահաս մահը։ Ասում եմ վաղահաս, որովհետև Շէլգունով մտաւորապէս դեռ բոլորովին թարմ և առոյգ էր, դեռ նրա գրած վերջին «Очерки Русской жизни» (Русская мысль № 4) լի է երիտասարդական ազնիւ գործունէութեան ոգով, հասարակական բարձր իդէալի ծառայելու անշէջ կրակով... Ինչու մարմնի առողջութիւնը չհամաձայնեց նրա հոգու թարմութեան հետ, ինչու այդ մաշող ու հնացող օրգանիզմը չդիմացաւ նրա հոգեկան կեանքի զօրեղ և անվեհեր գործունէութեանը։ Դեռ երէկ նա իր «Очерки»... մէջ դատապարտում էր «Недѣля» շաբաթաթերթին, որ սկսել է եղէալների և բարձր ոգևորութեան հակառակ գործել, որ սկսել է բարձրացնել «միջակ մարդու» (средній человѣкъ) նշանակութիւնը կեանքի մէջ. դեռ երէկ նա խորին և անընդրդող համոզմունքի խօսքերով յետադէմ և անգործունեայ մակաբոյծները էր շպրտում այդ շաբաթաթերթի մէջ գործողներին, իսկ այսօր, նոյն „Недѣля“-ն պատկ է դնում իր „մեծ“ հակառակորդի դագաղի վրայ...

„Недѣля“ շաբաթաթերթի մասին երկրը խօսելուց և նրա բռնած վնասակար ուղղութիւնը բացատրելուց յետոյ՝ Շէլգունով իր «վերջին» յօդուածի «վերջին» երեսում հետևեալ խօսքերն է գրում. „противъ этого теченія мысли слѣдуетъ протестовать и бороться изъ всѣхъ силъ» (մտքի այդ հոսանքի դէմ պէտք է բոլորը ուժով բողոքել և մաքառել)։ Եւ նրա ամբողջ կեանքի գործունէութիւնը բնորոշ կերպով արտայայտւում է այդ մի նախադասութեան մէջ։ Այո, Շէլգունով իր ամբողջ կեանքը և մրցման մէջ անցկացրեց, մրցումն ոգեշութեան դէմ, մրցումն սահմանափակ, նեղ, կոպիտ հակացողութիւնների և զգացմունքների դէմ... Եւ ինչպիսի մրցում, ինչպիսի ոգևորող, բարձրացնող, ազնուացնող, խրախուսող մրցում։

Հանգուցեալ հրապարակախօսի վերջայ կարելի է Նեկրասովի սրտառուչ ոտքով ոտքաւ. „Плачь, русская земля, но и гордись»! որով բանաստեղծը լացեց Դոբրոլիւբովի մահը . . . Եւ երաւ որ Շէլգունովի վրայ լաց եղաւ ամբողջ Ռուսաստանը,—ինտելիգենտ, երիտասարդ, ազնիւ ու եռանդուն Ռուսաստանը։ Նրա դագաղի վրայ դրած էր 40 պսակ և այդ պրսակները ուղարկող Ռուսաստանը հէնց այն է, որի համար աշխատեց, կրուեց՝ իր երկար գործունէութեան ընթացքում Ն. Վ. Շէլգունով։ Մեր Կովկասի հայ երիտասարդութիւնը նոյնպէս խորին յարգանքով ու ակնածութիւնով է վերաբերւում դէպի Շէլգունովը և նրա սքանչելի յօդուածների ընթերցանութիւնից ոգևորւել ու ազնուացել է մեր այժմեան հայ երիտասարդների մեծամասնութիւնը։ Մենք ցաւակից ենք ռուս երիտասարդութեան վշտին և անկեղծ սրտով ցաւում ենք այն մեծ կորուստի վրայ, որ ստացաւ Ռուսաստանը՝ Շէլգունովի մահով։

ԵՐ. ՂԱԶԱՐԵԱՆ

—

Հերքումն

Օդեսայի համալսարանի հայ ուսանողները խնդրում են մեզ տպագրել հետեւեալը.

„Իր „Թուրքիկ յիշատակագրի“ մէջ Թիֆլիսում հրատարակւող մի հայ լոգաբի 55-րդ համարում տպագրւած՝ պ. Գ. Նիկողոսեանը թոյլ է տւել իրան ի միջի այլոց եւ հետեւեալ բանաստեղծական թռիչքն անել.

„Տագնապալի վիճակին“—ասում է պ. Նիկողոսեանը—օգնութեան հասան սակայն Խորհրդարանական քանանան եռ. օդեսարնակ մեր կորիւ երկրացիները, մեծ մասամբ ուսանողներ. անձրապաղ հիդրանոց տարան . . .“

Մենք՝ պ. Նիկողոսեանին ծանօթ ուսանողներս՝ հերքում ենք միանգամայն պարոնի մոգոնովի տողերը։ Իրողութիւնն այս է. գալով Օդեսա, պ. Նիկողոսեանը դիմել էր տեղոյս քահանայի օգնութեանը, որ եւ ուղեկցել է նրան դէպի մի հիւրանոց. „կրտրիճ երկրացիներ“, մեծ մասամբ ուսանողներն, աւելին կասենք. ուսանողներից ոչ մինը պարոնի երեսն էլ չէ տեսել այդ միջոցին, երբ տէր-հոր ուղեկցութեամբ հիւրանոց էր գնում. ուսանողներից եւ ոչ մինը ներկայ չէ եղել այդ ժամանակ. եւ ոչ մինին ուսանողներից յայտնի չէր, որ պարոն Նիկողոսեանը Օդեսա պիտի գայ. հակառակ դէպքում—եթէ ուսանողութիւնը անգամ գիտենար, չէր թոյլ տայ ո՛ եւ է ընդունելութիւն անել այստեղ պ. Նիկողոսեանին։ Որ ասոիծանի այլանդակ բան դուրս կը գար, եթէ Պոլսից Օդեսայի վրայով ամեն մի անցնողին ուսանողութիւնը համակրական ցոյցեր անէր . . .

Զուտ սուտ, պարոնի սահուն գրչի ծնունդ եւ մանաւանդ նրա վառ երեւակայութեան արգասիք պիտի համարել այդ իրականութիւնից զուրկ տեղեկութիւնը մեր մասին։

Թերեւս պ. Նիկողոսեանը իրան մեծ գործիչ է համարում (Աստուած էլ առէլի կարողութիւն տայ), այդ իր գործն է. մենք սակայն վարել ենք պ. Նիկողոսեանի վերաբերմամբ ոչ իբրեւ գործիչի, այլ միմիայն մարդասիրական տեսակէտով. այդ նոյն կարծիքին ենք մենք եւ այժմ.

Սոյն երկտողով զգուշացնում ենք պարոնին, որ աշխատէր իր „Թուրքիկ յիշատակագրի“ մէջ գրչի տակից տեղի չունեցած դէպքեր չբերնցնել, քանզի գէ՛թ մասամբ այդ յիշատակագիրը մնտեցնել իրականին . . .

Ապա ի՞նչպէս է վարւում պ. Նիկողոսեանը այն դասակարգի հետ, որը զուրկ է հերքելու միջոցից . . .

Իսկ կաշկանդւած եւ զերւած միանգամայն պ. Նիկողոսեանի դիմիչ խօսքերով հիւսւած իր մեր մասին յայտնած լաւ կարծիքից, չենք կարող, կեղծելով պարոնին թագցնել ճշմարտութիւնը եւ չբիտստովանել, որ ընդհակառակը՝ ինքը՝ պ. Նիկողոսեանը մեր ամենից վրայ ճշգիչ եւ ամենամտաթար տպասորութիւն թողեց, որովհետեւ նա մի քանի օր Օդեսա մտալով զբաղւած էր իրանով միայն, իր անձը զովելով, փառաբանելով եւ իսկական գործիչների անունների վրայ ստուր ծգելով...

Հէնց այդ պատճառաւ ուսանողութիւնը մի դաս տւեց պ. Նիկողոսեանին, որ անշուշտ նա չի մոռանայ իր կեանքի մէջ։ Սոյն երկտողը թող լինի նրա համար երկրորդ դասը... Խոստում պահելով իրան, պարոնը թող մի փոքր սանձահարէ իր տաք երեւակայութիւնը եւ խոյս տայ այս եւ այն փաստը աղճատել-աղաւաղելուց։

Ռուսահողներ Օդեսայի համալսարանի.

Ց. Ցովհաննէսեանց. Իշխան Բ. Երկայնաբազուկ-Այդոդիեան. Ե. Վիրապեանց. Կ. Հայրապետեանց. Ի. Զորիրաբեանց. Գ. Ծովհաննեանց. Զ. Բաղրատեանց.

Օդեսա, 13-ն ապրիլի 1891 թ.

Խառն լուրեր

Լօնդոնում հրատարակւող „Pear. Weekly“ ամենօրեայ թերթի հրատարակիչը շատ բաժանորդներ գրաւելու համար խոստացել էր իր բաժանորդներին իրրեւ պրեմիում մի հարանացու տարեկան 1000 դոլլար եկամուտով։ Հրատարակիչն ու իր կինը շրջելով գտան Լօնդօնի արուարձանների մէկում մի երիտասարդ այրի կին, որը համաձայնեց հարանացու պրեմիայի դերը կատարել։ Հէնց որ այդ յայտարարութիւնը տպւեց, լոյս ընկաւ անթիւ փեսացուներ—պրոֆեսորներ, գործակատարներ, քահանաներ եւ ֆինանսիկներ։ Հրատարակիչը բոլոր այդ փեսացուների ձանձրայարհաճախը վարում էր, համակներ էր տալիս նրանց եւ մէկ մէկ ուղարկում հարանայուս-պրեմիայի մօտ։ Այդտեղ փեսացուներին հիդրաւիրում էին թէյով, սուրճով, պաքսիմատներով եւայլն. եւ այդ բոլորը հրատարակչի հաշիւով. բայց պրեմիա-հարանացուն ոչ մի փեսացու չէր հաճանում։ Վերջապէս հրատարակիչը տեսանելով, որ ամիսների ընթացքում ինքը կոտր ընկնելու վրայ է, յայտնեց իր բաժանորդներին որ յետ է առնում իր խօսքը, որովհետեւ պրեմիա-հարանացուն այնքան գեղեցիկ է, որ նրան յարմար փեսացու չէ գտնւում։

Սուրիանդակ

Թիֆլիս. „Մուրճին“. Ի նկատի կունենանք եւ կաշխատենք այլ եւս չընթանալ „Մուրճի“ մասին։ Իսկ երբեմն իսկեթէ ցանկանանք, կընդունենք ձեզ, որ ուղարկէք ձեր աշխատակիցների եւ բաժանորդների կարծիքը, ինչպէս դուք այդ արել էք ձեր թերթի մէջ...

Խմբ.-հր. Տիգրան Նազարեան

ԱՐՕՐ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

‹ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ›

Պատկերազարդ հանդէսների

Տպագրում է ամեն լեզուներով **գրքեր,** *լրագրեր,* **բլանկներ,** *ԱՖԻՇՆԵՐ,* **պատկերազարդ ամեն տեսակ հրատարակութիւններ,** *իր վրայ առնելով ՆԿԱՐՆԵՐԻ փոքրացնելը ,***ՊԱՏԿԵՐՆԵՐԻ նկարելը,** *ՄՐԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ,* **ԹՈՒՂԹԸ,** ԿԱԶՄԵԼՆ ու ԲՐՕՇԻՒՐ ԱՆԵԼԸ:

Հասցէն՝

Тифлисъ, уг. Головин. прос. и Барят. ул. Художественная Типографія „АРОРЪ“.

Աւագին մասնաւոր հիւանդանոց

ԲԺՇԿԱՊ. Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի դիմաց)

Հիւանդներին ընդունում են ամենայն օր, բացի կիւրակէ օրերից

ԱՌԱՒՕՏԵԱՆ

Նաւասարդեանց 9—11 ժամը վիրաբուժական եւ ատամնացաւի, վեներական եւ աչքացաւի հիւանդութիւնների համար:

Բոգդովսկի 10—11 ժ. ներքին, երեխայոց եւ կանացի հիւանդ.

Կէս թժիշկ Խուանսկեանց 11 ½—12 ժ. կանացի եւ երեխայոց հիւանդ.

Կէս թժիշկ Մուխրանսկայա 12—1 ժամ. կանացի եւ ներքին հիւանդ.

Պրոտասեվիչ 12—1 ժ. Ականջի, կոկորդի եւ քթի հիւանդ. եւ մ ա ս ա ժ.

Կարապետեանց 12 ½—1 ժ. Ներքին եւ երեխայոց հիւանդ.

ԵՐԵԿՈՅԵԱՆ

Պոդգինով 5—6 ժ. Մանկական, ներքին եւ նեարդային հիւանդ. էլէքտրոտէրապիա

Գաղամեանց 5—6 ½ ժ. Սիֆիլիսի (եւ կաշիի) եւ վիրաբուժական հիւանդ.

Նաւասարդեանց 6—7 ժամը.

Հիւանդի իւրաքանչիւր այցելութիւնը հիւանդանոցում արժէ 50 կոպէկ:

Բժշկների համախորհուրդի (կոնսուլտացիա) համար առանձին համաձայնութիւն է կայացնում:

Հիւանդանոցում գտնւում է միշտ օրապահ բժիշկ. երեկոյեան ժամի 9-ից մինչեւ առաւօտեան ժամը 7-ը.

Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ

Նաւասարդեանց:

Уроки армянскаго языка, армянской исторіи и исторіи армянской литературы. Спросить въ конторѣ редакціи „Агбюръ и Таразъ“.

Ամենայն տեսակ պատրաստի զգեստների պահեստ և խանութ

Ն. ԽՈՒԴԱՆԵԱՆՑԻ

Միքայէլեան կամուրջի վրայ, Միրզօեվի խանութներում: Զգեստներ կան թէ երեխաների եւ թէ հասակաւորների համար եւ վաճառւում են ամենաձեռնտու գներով: 7—10

Վերկայ մայիս-յունիս ամիսներում լոյս կը տեսնեն

ՍՐԻՆԳԻ — ԱՐՇԱԿ ՄԵՀՐԱԲԵԱՆԻ

I. ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ եւ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ 1880—1890

II. *ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ* 1884—1889

III. *ՓՈՔՐԻԿԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ*

Պատկերազարդ մանկական վէպ:

Այս երեք հրատարակութեան գինն է Մէկ րուբլի:

Դիմել Тифлисъ. Аршаку Меграбянъ Въ конторѣ Ред. „Агбюръ“.

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ

ԽԱԹ-ՍԱԲԱ

(Հայ բոշաների կեանքից)

Գինն է 15 կոպ.

Ծախւում է Թիֆլիսի գրավաճառներին մօտ և „Մուրճի“ խմբագրատանը

Լոյս տեսաւ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

„ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ“

Գինն է 50 կոպէկ

Ծանապարհածախսով 60 կոպէկ: Ցանկացողները դիմում են հեղինակին հետեւեալ հասցէով. Москва, Газетный пер. д. Ліанозова, въ типографію М. Бархударова.

Լ Է Օ

ԴԱՒԻԹ *եւ* **ՄՀԵՐ**

Ժողովրդական վէպի քննադատութիւն

Վաճառւում է „Աղբիւրի“ գրասեն. և Թիֆլիսի գրավաճառների մօտ:

Գինը 15 կոպ.

Լոյս տեսան

Ժողովրդական ընթերցանութեան համար խմբագրուած հետեւեալ գրքերը.

Վիպագրական

ԼԱԼՕ, Թիւրքահայերի կեանքից	5 կ.
ԱՅՆՏԵՂ եւ ԱՅՍՏԵՂ, Գ. Արծրունու	10 կ.
ԱՐՆԱԳԻՆ, Լէօի	7 կ.
ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՏԻԿԻՆ . . .	5 կ.
ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ, ըստ Շէքսպիրի	5 կ.
ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ, թարգ. Խ. Մ.	5 կ.
ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏ, Գիւղ. Հուլթակահար	5 կ.

Բնագիտական

ՊՍՏԻԿ Ը ԲԱՑՑ ՉՍՏԻԿ Ը, Լունկեվիչի	5 կ.
ԻՆՉ Է ԿԱՅԾԱԿԸ	5 կ.

Կենսագրական

ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի .	50 կ.

Առողջապահական

ԽՈԼԵՐԱ եւ նրա առաջն առնելու միջ.	5 կ.

Տպագրւում է. „Եղբայրը եղբօր դէմ“: Շուտով լոյս կը տեսնեն. „Երկրաշարժ եւ հրաբուղխ“, „Գարշենի արջերը“ եւ ժողովրդական ընթերցանութեան ուրիշ գրքեր.

Դիմել. Թիֆլիս,

Խ. Մալումեան

ՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ.

ԿԱԶՄԵՑ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

Լոյս տեսած է երրորդ Ալբոմը որ պարունակում է իւր մէջ 20 մեծադիր լուսանկար պատկերներ Վայոց ձորում գտնուածներից իւրեանց անցեալ եւ ներկայ համառօտ ծանօթութեամբ, աւելի հարուստ եւ շքեղ քան առաջին եւ երկրորդ Ալբոմը. գինը ճանապարհածախսով 10 րուբ. կազմածը, իսկ չկազմածը 50 կոպ. պակաս. ստանալ ցանկացողները թէ առաջին թէ երկրորդ եւ թէ երրորդ Ալբոմների համար դիմում են Эчміадзинъ Типографическій Комитетъ կամ ուղղակի կազմողին Վաղարշապատ լուսանկար Մ. Փափազեանց:

Վաճառվում է նաեւ լուսանկար Մ. Փափազեանի կազմած հին եւ նոր Կոստանդնուպոլսի լուսանկար պատկերներ նուրբ եւ մաքուր, թւով 40 հատ. սոքա բաժանուած են երկու մասի, իւրաքանչիւր մաս 20 հատական մէն մի մաս ձեռակազմ լինելով. Գինը 6 րուբ. ճանապարհածախսով, ցանկացողները դիմում են. Վաղարշապատ, լուսանկար Մ. Փափազեանցին:

Հ. ՇԱՀԲԱԶԵԱՆՑԻ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆԸ

(Литографія)

Թիֆլիսում. Բարեատինսկի փող., նշխ. Թումանովի տ. № 8

յանձնարարում է ալ.ալ. պատուէր տուողներին, որ ստացած լինելով ամենակատարելագործեալ

ԱՐԱԳԱՏԻՊ ՄԵՔԵՆԱՅ

միջոց ունի պատուէրները կատարել ԱՆՀԱՄԵՄԱՏ ԱՐԱԳ ԵՒ ԷԺԱՆ քան ուրիշները, ՄԱՆԱՒԱՆԴ երբ մեծ քանակութեամբ է պատուէրը: 7—50

Գ. ԱՂԱՅԵԱՆՑ

Բանաստեղծութիւններ.

Գինը . . . . . 1 ր. 50 կ.

Дозволено Цензурою, Тифлисъ 4 Мая 1891 года. Тип. Арорь Т. Я. Назарянъ, уг. Головин. пр. и Барят. ул.